

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Թիֆլիսի առևտրական գազեր:

Հրատարակում է շաբաթը մէկ անգամ կէս թերթ, կիրակի օրերով: 10 տալայ գինը Մարտից մինչև Յունիսը քաղաքում 2 ման. 50 կոպ., դուրը՝ 3 ման. թ:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ
(Ա.Ռ.Ա.ՁԻՆ ՏԱՐԻ)

Գաղթին ստորագրվի կարելի է խմբադրոյի մօտ:
Գաղթին մը հրատարակելու կընդունվին մասնաւոր յայտարարութիւններ: Գների մասին կարելի է խմբաւ խմբադրատանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ:

Տէրութեան կարգադրութիւնները: Ծառաբոցներ լիտիտութիւնները, տողերը: Մոսկովի Պետրոսեան Ակադեմիայի և Թիֆլիսի մոսկովսկի գիւմարի պատճառով: Շաբաթ ու սկիստիս զրոյսայի առաջին դործարութեանց 5-դ տեսիլը: Զանազան տեղեկութիւններ: Առևտրական տեղեկութիւններ: Մասնաւոր յայտարարութիւններ:

ՏԵՐՈՒԹԵՆԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ: ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

1866 թւի յուլիսի 5-ին Սոնախի նահանգական բժիշկ, կուլիմսկի աստուոր ՍԱՀԱԿԱՆՅԸ և Գորու նահանգական բժիշկ, Տիտուկարնի Սովետնիկ ԾՈՒԹԻՆԵԱՆՅԸ նշանակվեցան մէկը միւսի տեղ մայիսի 10-ից:

7-դ Մեծիկայ Կոմիտայի դատաստանական անդամ Նադիրբեկի սովետնիկ ԽԱՏԻՍԵԱՆՅԸ նշանակվեցաւ 3-դ Մեծիկայ Կոմիտայի դատաստանական անդամ:

ՏՈՐԳԵՐ:

Քաղաքի գաւառական կառավարութիւնում յուլիսի 11-ին նշանակված է Յիւլա և Խօպի կոչված գետերի մէջ դանկած ճանապարհի համար 1190 խորանարդեան (կուրիւսակի) սաժնի խոյր աւաղի հասցնելու տորդը:

Թիֆլիսի գաւառական կառավարութիւնում սեպտեմբերի 20-ին կծախվի Թիֆլիսի Ղազո Շառմեանցի, Միկի, Օսանա և Զանազանա Վարդանեանցիների քաղաքի 2 մասում և երկրորդ կիւրաւարումը գտնված 16,000 մ. զին դրած տունը:

Նրեանի գաւառական կառավարութիւնում օգոստոսի 8-ին կծախվին Քանաքեռցի Աւարեկ և Մովսէս Մուրադեանցիների Նրեան քաղաքում գտնված, 2500 մ. զին դրած երկու դուքանները:

ԹԻՖԼԻՍ

յուլիսի 2-1866.

Բէալեան ուղղութիւնը հիմի ամեն երկիրներում բարձր է համարվում, քան թէ դրա հակառակ ուղղութիւնը, որ կոչվում է կլասիկական:

Ո՞վ չի ասի հիմի, որ էն ուսումն է լաւ, որ օգուտ է բերում կեանքի մէջը. ինչ կանես ես էն ուսումը, որ կեանքի համար աշխարհումը ոչնչի պէտք չլինի:

Կեանքի համար ինչ բաներ են հարկաւոր: Ի հարկէ էն բաները, որ պէտք են մեզ առաջ նիւթական պակասութիւնները լրացնելու և ապահովացնելու և յետոյ կուշա փորով և առողջ մարմնով հոգալ մեր բարայական կողմերը կատարելագործելու:

Աշխարհումը մեզ հարկաւոր են լաւ արհեստաւորներ, երկրագործներ, խաճարածներ, զանազան ֆարրիկաների և զաւօդների կառավարողներ, վաճառականներ, դիտականներ, դատարարներ, քահանաներ, աստիճանաւորներ և այլն և այլն:

Առանց հաց, անմիտ, անհաշուտ, տառնց տան հարկաւոր կան կարասիքի, առանց ֆարրիկաներում և զաւօդներումը պատրաստած բաների չենք կարող մեր մարմնի պակասութիւնները լրացնել, չենք ունենալ լոյր յարմարութիւնները անդիւտ համար ուրեմն մեր մարմնը կմնայ զրկանքի մէջը. մարմններս զրկված է, ապա ուրեմն և մեր հոգու կարողութիւններն էլ, որ մեծ կանոնին մարմնի զօրութեան հետ, կըլկվին հարկաւոր նիւթերից, կկորցնեն իրանց ուժը:

Առողջ մարմնով և կուշա փորով կարող է մարդ կատարելագործել իր մտաւոր կարողութիւնը, սովորիլ հարկաւոր գիտութիւնները, անլաւանել իր վարքն ու բարքը: Առաջանում են էղանդից զիմեականներ, դատարարներ, քահանաներ, աստիճանաւորներ:

Լորներ, որոնցից մէկը մասնաւորապէս որ և իցէ գիտութեամբ պարապելով, նոր նոր գիտներ է գտնում և կատարելագործում իր ընտրած առարկան, միւսը պարասում է երեխաներին հարկաւոր գիտութիւններ և արհեստներ սովորեցնելով, երրորդը ժողովրդին քարոզում է խղճմտանքի պահանջմունքներին հետեւիլ և քրիստոնէական կեանք վարել, չորրորդը տէրութեան ծառայելով զանազան մասերում, ժողովրդի զանազան վէճերը քննում է ու վճռում:

Խեղճերը եթէ լոյրովին չէ, չառ մեծ մասով զուրկ են մնում իրանց մտաւոր կարողութիւնների կատարելագործելուց. որովհետեւ նրանց լոյր ժամանակը աղբուտի ճարելու վրայ է անց կենում, էլ ազատ ժամանակ չէ մնում նրանցը մտածելու և իրանց միտքը կատարելագործելու: Մասնաւոր չառ խեղճեր կան զիւրաւուց և արհեստաւորների մէջ:

Լայկի խեղճերը ուրեմն ինչ են: Մէկ էն ալիս մեքենայ են, որոնք որ ողջ օրերը բանում են իրանց ձուներով, սաներով կամ ուսերով, լոյրովին չմտածելով էն բաների վրայ, որ չեն պատկանում իրանց դործին կամ արհեստին: Բանում է, ուսում է, խմում է, քնում է: Անասուններն էլ համարեա թէ մէկ քանի դործերումը մի և նոյն պաշտօնն են կատարում: Աղին լծում են սէլից մէջը, քո բանըդ և չինել տալիս, վերջը կերակրում են, որ նոր էլի կարողանայ քո դործը կատարել: Այսին կամ արհեստաւորին բերում են, բանեցնում են դործից վրայ, վերջը վաքճ և տալիս և արձակում:

Բայց մարդը բարձր է անքան կենդանիներից, իր բանական մարմնով դա լոյրը բնութեան տիրող է. ուրեմն ամօթ է մարդու հոլկնի համար էնպիսի խեղճ մարդիք ունենալ որոնք մեքենայաւոր անասուններին պէս անհոգի, անմիտը կեանք են վարում:

Պէտք է աշխատել խեղճերին բարձրացնել: Ուսում պէտք է տալ: Բայց ինչպէս տալ ուսում, որ նրանք ժամանակ չունենան, ինչ աշխատանք ուսումը, որ իրանց դործին պէտք չէ: Ուսում տալուց առաջ պէտք է մտածել, որ նրանց գլխումը բան չի մտնիլ, մինչև նրանց փորը կուշտ չլինի. ի դուր կանցկենայ ուսումը վրայ դործ ածած ժամանակը:

Բայց ինչպէս կշտացնեն խեղճերի փորը, որ նրանք նվթական կողմից ապահով լինելով, կարողանան մտաւորապէս էլ կատարելագործվիլ և մարդկեանց կարգը դասվիլ: Պէտք է նրանցն էնպիսի բաներ սովորցնել, որոնցից փող կարելի լինի ըստանալ, կենքի հարկաւոր բաներ կարելի լինի առաջացնել:

Արհեստաւորը տալիս է իր որդուն ուսումնարան, մէկ երկու տարի թողնում է ուսումնարանումը, յետոյ շուտով դուրս է բերում ուսումնարանից «դրել կարողալ սորվեցաւ, բաւական է» ասելով և իր դուքանն է տանում կամ ուրիշ արհեստաւորին պահ տալիս, որ փող աշխատելու բան սորվի, բան չինէ, փող աշխատէ:

Եւ շատ օրինաւոր են վարվում էդ մարդիքը էդ գործումը, որովհետեւ դորդ որ մեր տված ուսումը արհեստաւորին բոլորովին պէտք չէ. և ի հարկէ չգործ ածված ուսումը, կենքի մէջը չբանեցրած գիտութիւնը կկորչի բոլորովին անօգուտ:

Արհեստաւորների և առհասարակ բոլոր խեղճերի որդեբանցը պէտք է տալ էն ուսումը, որ նրանք սկսում են սովորել մեր ուսումնարաններից դուրս դալուց յետոյ, էն գիտութիւնները պէտք է սովորցնենք նրանց, որ սկսում են սովորել նրանք աշխարհումը դուքաններումը իրանց ծնողներից կամ ուսուսաններից:

Ուստան սովորցնում է իր գիտեցածը աշակերտին էնպէս, ինչպէս ինքը գիտէ: Աշակերտը ուստա դառնալով մի և նոյնն է կրկնում: Անց են կենում ժամանակներ և արհեստները մնում են մէկ կետի վրայ, չեն առաջանում, չեն կատարելագործվում:

Պէտք են էնպիսի ուսումնարաններ, որտեղ սովորցնեն երկսանիւրին կենքի մէջ հարկաւոր արհեստները և գիտութիւնները ոչ թէ էն ձեռով, ինչպէս կան ժողովրդի մէջ, այլ աւելի կատարելագործված տալով և ուրիշն աւելի օգտակարը:

Ամեն աշխարհումը ամեն տեսակ դործ մէկ տեսակ չէ դուրս գնում, ամեն երկիր ունի իր սննդական պատկանելիքները. ուսումն էլ

պէտք է յարմարացրած լինի ամեն մէկ երկրի յատկութիւններին: Աւելորդ է բամբակ ցանել կամ չերում պահել սովորցնել էնպէս տեղ, որտեղ բնութիւնը դուրի է էգիպտի բաներից: Բնութիւնի բերքերին պէտք է յարմարացնել մեր ուսումը: Բնութիւնի բերքերի դանելու, ձեռք բերելու, մշակելու և նրանցից աւելի օգուտ ստանալու հարկաւոր են բնական գիտութիւններ:

Բէալեան ուղղութիւնի միտքն էլ հենց էս է: Էս անդամով էս խորհրդածութիւններն աւելու պատճառ ունեցանք Մոսկովումը 1865 թվի վերջին «Պետրոսեան երկրագործական և անտառատնկութեան Ակադիմիայի, Петровская земледельческая и лесная Академия բացվիլը և Թիֆլիսումը էս տարի մասնաւոր զիննադիպի հաստատվիլը:

Պետրոսեան Ակադիմեան Ռուսաստանումը բոլոր անտեսական գիտութիւնների բարձր ուսումնարանն է և կարող է էդ գիտութիւնների կանգիդատի և մագիստրոսի վկայականներ տալ: Ուսումնարանը բաց է ամեն կարգի մարդկանց համար: Եղտեղ զըլխաւորապէս սովորցնում են անտեսական գիտութիւն, խաչնարածութիւն, գրաստաբուժութիւն, դիւղական շինութիւն և ինժեների արհեստը, քաղաքական անտեսութիւն, անտառատնկութիւն, գիւղական արհեստական գիտութիւններ, միքենայարանութիւն, երկրաբաշխութիւն, քիմիա, ֆիզիկա, օդերեւութաբանութիւն, անկաբանութիւն, կենդանաբանութիւն, հանքաբանութիւն և երկրագիտութիւն: Ուսումնարանը մանող աշակերտից քննութիւն չէ պահանջվում և ազատ ըտոյները կարող են քանի տարուց յետոյ էլ կամենան, ենթարկվել քննութիւնին և ստանալ կանդիդատի կամ մագիստրոսի աստիճան: Ազատ ըտողը տարէնը 25 մ. է տալիս Ակադիմիային:

Թիֆլիսի մասնաւոր զիննադիան, որի մասին մասնաւոր յայտարարութիւնը տպված է էս նումերումը, մէկ մասով էս ուսումնարանի նման բան է: Եղտեղ բացի գիմնագիտումը դաս տված աւարկանները և լեզուները կսովորցնեն նմանապէս հաշարարութիւն, աւետարական օրէնքները, քիմիան և վաճառագիտութիւնը:

Ուսումնարանը մտադիր է նմանապէս Թիֆլիսի մօտ մէկ քանի օրաւար գետին ձեռք բերել, ֆերմա չինել և ամառվան ժամանակը հմուտ և փորձված ագրոնոմի ձեռով ցոյց տալ կատարելագործված մեքենաները, դանաղան տնտեսական դործերումը բանեցնելով:

Վիսթոյակ աշակերտները տալիս են տարին 250 մ., կիսավոշակները 160 մ., խիկ երթեւեկները 100 մ.

Էս երկու ուսումնարաններն էլ զլխաւորապէս մեր ցանկացած գիտութիւններն են հաղորդելու աշակերտներին: Յանկանում ենք միայն մեր կողմից, որ երկուսն էլ բոլոր ջանքը դործ դնեն իրանց նպատակին հասնելու, որ էն տեղերից դուրս եկած աշակերտները ուղղակի կենքը մտնեն և ոչ թէ էլի հին ուստաների մօտ և շարունակել մեր պապերի շարունակածը...

• ՀԱՐՍ ԵՒ ՍԿԵՍՈՒՐ • ԴԻՍԿՍԻՅԻ ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵՆՑ 5-դ ՏԵՍԻՂ: *

ՊՕՂՈՍ, ՅԵՏՈՑ ԽՕՐԻՇԱՆԸ:

Պ Օ Ղ Ո Ս :

Յի, այսպիսի անպիտան քաղաք: Տղիտութիւն, կոպիտութիւն, արծաթասիրութիւն, արհամարհանք դէպ ի ուսեալները, ծաղրածութիւն: Ժողովուրդը ընկղմված է ամենայն չար, անբարոյական զգացմունքների մէջ և անհասկացողութիւն մարդկային կարեւորութեան հասած է մինչև վերին աստիճան: Այս տեղ մարդեր տգետներ, նախապաշարման և մնտիապաշտութեան մէջ խեղդված, այս տեղ մարդեր խաբեբայութեամբ և կողոպտմամբ պարապած, այստեղ մարդեր թշնամիներ նոր մաքի, նոր իդեայի և ինչպէս ես լուսաւորեալ երկտասարդների, այստեղ մարդեր կեղտոտ հագուով և կեղտոտ մարմնով: Նմանապէս և կանայք անպիտաններ, տգետներ և չքեղ զգեստերով միայն պարապած: Առհասարակ ինձ հասկացողներ և արհամարհողներ: Ինձ, որ եմ լոյս գիտութեան և հիմն լուսաւորութեան: Ես ստեղծում եմ լեզու, ես փոփոխում եմ կեցողութիւն, ես իմ փայլող լուսով կամենում եմ լուսաւորել խաւարներին, ես իմ մըտաւոր ուժն չեմ խնայում, որ նոքա մարդկութեան մէջ հանդիսանան իրրե մերդեր, բայց նոքա ինձ չեն հատկանում, ինձ արհամարհում են: Ես հաց եմ տալիս նոցա. նոքա քարերով են հանդիպում: Ես իմ գրաւոր աշխատութիւններով կամենում եմ տարածել նոցա մէջ գիտութեան պտուղներ և լուսաւորութեան, նոքա աշխատում են ոչն:

* Էս յօդուածը ստացանք մեր թատրոնական գրողներից մէկ պարոնից, որ խնդրեց մեզ տպել «Բնիկ Թիֆլիսեցի հայ ստորագրութիւնով:

խանութները հայոց աղջկանց փախցնելը:

7.) Բաղրավազի դադարեցնել Ղարադաղի կողմերի բեկերի և խաների անխառն կառավարութիւնը:

8.) Թաւրիզի հայոց աղջկանց դպրոցի ապահովեցնելու համար նշանակել շարունակաբար տարին 250 թուման (թումանը երկը մանեթ է):

9.) Ղարադաղի Սուրբ Գեորգ վանքի կառուածքները յետ ստանալ տիրապիտողից:

10.) Մակիւայ Ալի խանից յետ պահանջել Մակիւայ Ս. Թադէոս Առաքեալի վանքի սեպհական դիւղը:

11.) Է. Ս. Թադէոս Առաքեալի վանքի ուրիշ կառուածքները յետ ստանալ տիրապիտողից:

12.) Խոյ քաղաքի հայոց «Ղազան վուչի» կոչված 40 թուման աւելորդ հարկի պահանջելը դադարեցնել:

13.) Թուրքերի գիւղերումը բնակած սահաւաթիւ հայերին հայաբնակ մեծ գիւղերումը բնակեցնել:

14.) Հրովարտակով հրամայել Ատրպատական պարսից տիրապիտողներին և պաշտօնաւոր անձներին, որ նրանք տէրութենի հրապարակ հայ քրիստոնէաների հետ սիրով վարվին:

15.) Հրովարտակով ազատ թողնել Թէհրան և Թաւրիզ քաղաքները մէջ բնակվող հայերին ամեն տեսակ հարկերից և իրաւունք տալ նրանց չոր նիւթեղէնների առուտուր (ալաթութիւն) անելու:

16.) Ատրպատականի պարսից չարխիին արդէն, որ նա չխառնվի երկու հայոց միմեանց հետ ունեցած հողերովան վէճի մէջ — էդ քննութիւնները կատարանին հայոց առաջնորդին:

17.) Հրովարտակով հրամայել պարսից չարխիին, որ նա հայոց անժառանգ մեռածների անշարժ և չարժեքան կաղերքին չտիրանայ և չխառնվի էն գործերումը, որ կը պատկանի հայոց առաջնորդին:

Միայն 18-դ յօդուածը, որ վերաբերվում է Ատրպատականի քաղաքներումը և հայաբնակ գիւղերումը դանդակ անելու իրաւունքին, չէ հաստատված դեռ ևս:

Էստիլի արտօնութիւններ տաճարով շահից, Գեորգ առաջնորդը յետ դառաւ էս տարի Թաւրիզ:

Խօսքերայի մասին: Արեւի զաւառի Ուսան անունով քաղաքումը լուս ընկաւ խօսքայ: Մինչև մայիսի 22-ը էդտեղ 19 մարդ հիւանդացաւ խօսքայով. իսկ մայիսի 22-ից մինչև մայիսի 29-ը նոր էլի հիւանդացաւ:

55 մարդ, որոնցից 15-ը առողջացան, 16-ը մեռան և հիւանդ մնացին 43 հոգի:

Պետերբուրգումն էլ յունիսի 12-ին մէկ մէկ մարդ մեռաւ խօսքայով, որն որ դոնապանի պաշտօն էր կատարում մէկ տանը: Յաւը մէկ քանի սահաթ է քաշել միայն, էնպէս որ բժիշկը չէ վրայ հասել:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Լօնդօն յունիսի 17.

Ամերիկայից ստացած համբաւները բամբակի գների մասին շատ լաւ են: Էստեղ էլ վեր են քաշվում հետն ու հետը գները:

Լիւթերուդ յունիսի 17.

Բուրդը Թէպէտ լաւ գնով է ծախվում, բայց պատերազմի պատճառով նշանաւոր առուտուր չկայ:

Պետերբուրգ յունիսի 18.

Կուրսը Լօնդօնի վրայ • 26 ³/₄ պէնս:
Պարիժի վրայ • 266 ¹/₂ սանտիմ:
50% Լատարեյով առաջին փոխառութենի տոմսակները • 111 ¹/₂ ման.
50% Լատարեյով երկրորդ փոխառութենինը • 105 ¹/₂ ման.

ԹԻՖԼԻՍ ՅՈՒՆԻՍԻ 27.

Գրումեն Պետերբուրգից դեպի չայով ռսերէն «Կովկաս» դաղեթին, որ Աւստրիայի, Պրուսիայի և Իտալիայի մէջ ծագած խաղաղութենի ցանկութենի պատճառով ամեն տեղ էլ բիրժաներումը առուտուրը բուսացաւ:

Թիֆլիս 1866 յուլիսի 2.

Էս շաբաթ ծախվեցաւ 200 հակբաժ բախ 10 մ. 80 կոպեկով:

Բուրդը — անցեալ շաբաթվայ գները:

Ինդիլու շաբարը • 10 մ. 40 կ.

Ուսինը • 11 մ. 60 կ.

Արծաթը 72 պրօբի • 80 մ.

— 84 պրօբի • 350 մ.

Ոսկին • 7 մ. 40 կ.

ՄԱՍՆԱՒՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Բոլոր արտով ուրախացած յայտնում ենք մեր երիտասարդ խմբագրողներին, որ Գաբունի հրատարակող Տէր-Ստեփան Մանդինեանցը, ինչպէս երեսմ և նրա էս տարվայ ապրիլ ամսի Գարունից (356 եր.), պ. Ստեփանէի երկու յօդուածներից շարժված այսուհետեւ ոչինչ պատասխան չպէտք է տայ և բնականաւոր խմբագրողների հեղինական դրուածքներին:

Չենք հասկանում միայն թէ Տէր-Ստեփան Մանդինեանցը մինչև քանի տարին մարդուն երիտասարդ է համարում, եթէ մինչև 30 տարին՝ ուրեմն մենք համարձակ կարող ենք ասել, որ մեր բոլոր խմբագրողները, ինչպէս պ. Ստեփանէն, նմանապէս պ. Սիմէոնեանցը և մենք, այս ինքն Ռուսաստանումը գտնված բոլոր հայ խմբագրողները ազատ ենք Տէր-Ստեփանի պատասխաններից, բայց ամիսս որ միայն մեր մէկ տեսակ գրվածները (հեղինականները) ստացել են էդ արտօնութիւնը:

Թող արանից յետոյ ան երիտասարդ, այս ինքն ձեր հայ խմբագրողներ զանէ դու և կամ սպասէ էլած երիտասարդ սպասողների ձերանալուն և յետոյ պատասխան տայ նրանց դրուածքների դէմ:

Նորին Կայսերական Բաճրութիւն Կովկասի Փոխարքայի հրամանով բացվեցաւ Թիֆլիսումը Պ. պ. Մոնաստիրցովի Գուրգիներեդեանցի և Տէր Յակոբեանցի ընկերութենով մէկ նոր գիմնազիաի հաւասար ուսումնարան: Էս ուսումնարանի նըպատակն է պատրաստել աշակերտներին կամ ուղղակի համալսարան մոնեղու և կամ վաճառականութենի համար: Ամառվան արձակ ժամանակներին աշակերտներին կսովորցնեն առանձին ամառանոցումը և դիւղական տնտեսութիւն երկրագործութիւն, այգեգործութիւն և շերամապահութիւն Եւրոպացւոց ձևով:

Էս ուսումնարանումը ընդունվելու են ձրի Թիֆլիսի տաճարաւոր քաղաքացւոց որդեւանցից 10 հոգի, ելթեկե աշակերտ: Էդ երեխաներին կընարէ Թիֆլիսի քաղաքական կառավարութիւնը: Ուսումնարանը դանվում է ղեկավարութիւնի քուչայում, Արշակունու տանը, որտեղ ցանկացողները կարող են ստանալ էս ուսումնարանի սպված կանոնադրութիւնը: